



**ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ**  
**ՀԻՄՆԻՍԱՅԻՆ ԱՍԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ**  
**WESTERN PRELACY**  
**OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA**  
Archbishop Moushegh Mardirossian, Prelate  
Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745, E-mail: [Prelacy@aol.com](mailto:Prelacy@aol.com)



## **ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆ ՀՕՐ Ա. ԾՆՆՂԵԱՆ ԱՄԱՆԴԱԿԱՆ ԸՆԹՐԻՔԸ ՊՍԱԿՈՒԵՑԱՒ ԱՆՆԱԽԸՆԹԱՑ ՅԱԶՈՂՈՒԹԵԱՄԲ**

- **ԱՉԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻՆ ՈՒ ՉԱՆԱՉԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐՈՒՆ  
ԲԱՑԱՌԻԿ ԼՈՒԻՐԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ Կ'ԱՐՏԱՅԱՅՏԵՆ  
ԱՉԳԱՅԻՆՆԵՐՈՒ ՉՕՐԱԿՑՈՒԹԻՒՆԸ**

6 Յունուարը հայութեան համար իւրայատուկ տօն է, Քրիստոսի Ա. Ծննդեան տօնը: Հայութիւնը ամենուրեք այդ օրը կը կը եկեղեցական յատուկ արարողութիւններով ու տօնախմբութիւններով, որոնք զինք հաղորդակից կը դարձնեն քրիստոնէական հաւատքին ու ազգային աւանդութիւններուն:

Արդ, ինչպէս Հայաստանի ու արտերկրի տարբեր օճախներուն մէջ, Նոյնպէս ալ մեր Թեմին՝ Ա. Ծննդեան տօնը կը նշուեցաւ մեր եկեղեցիներուն, ընտանեկան ու ազգային յարկերուն տակ, 5ԵՆ 7 Յունուար երկարող օրերուն:

### **ՃՐԱԳԱԼՈՅՑ**

5 Յունուարի երեկոյեան, մեր Թեմի բոլոր եկեղեցիներուն մէջ տեղի ունեցաւ ճրագալոյցի հոգեպարար արարողութիւնը:

Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան այս առիթով Ա. Պատարագ մատուցանեց Փասատինայի Ա. Սարգիս եկեղեցոյ մէջ ու տուաւ օրուան խորհուրդը բացատրող պատգամ մը: Ներկայ Զալիֆորնիոյ խորհրդարանի անդամներէն Էնթընի Փորթալիսօ:

Այս արարողութիւնները խորքին մէջ նախատօնակն էին քրիստոնէական աշխարհի մեծագոյն տօներէն՝ Քրիստոսի Ա. Ծննդեան ու Աստուածայայտնութեան, որ տօնախմբուեցաւ Կիրակի, 6 Յունուարին:

### **Ա. ԾՆՈՒՆԴ**

Արդարեւ, Կիրակի, 6 Յունուարի առաւօտուն, մեր Թեմի բոլոր եկեղեցիներուն մէջ կը տիրէր տօնական մթնոլորտ: Ա. Ծննդեան ու Աստուածայայտնութեան տօնին առիթով, տեղի ունեցաւ Ա. Պատարագ եւ աւանդական ջրօրհնէք, առիթ տալով, որ հաւատացեալ մեր ժողովուրդը Աստուածորդուն պարգեւները խորհրդանշող օրհնուած ջուր տանի իր սեփական յարկը, ոգեղենին կողքին նաեւ այս ձեւով հաղորդակից դառնայ այս մեծ տօնի խորհուրդին:

Առաջնորդ Սրբազանը հանդիսաւոր Ս. Պատարագ մատուցանեց ու ջրօրհնէքի արարողութիւնը կատարեց Կլենտէյլի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ: Արարողութեան ներկայ էին Հայաստանի գլխաւոր հիւպատոս Արմէն Լիլոյեան, մեր թեմի ժողովականութեան, հայկական միութեանց ու կազմակերպութեանց ներկայացուցիչները, բարերարներ, ինչպէս նաեւ հազարաւոր հաւատացեալներ:

## **ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆԻՆ Ս. ԾՆՆՂԵԱՆ ԸՆԹՐԻՔԸ**

Ինչպէս նախընթաց անելի քան տասնեակ մը տարիներուն, նոյնպէս եւ այս տարի, Ազգային Առաջնորդարանի մեծ ընտանիքը Ս. Ծննդեան տօնի երեկոն բոլորեց Սոնթեպելլոյի Ս. Խաչ Մայր Տաճարի յարկին տակ: Աւելի քան 650 ազգայիններ ըներկայ եղան Առաջնորդ Սրբազան Հօր Ս. Ծննդեան ընթրիքի հրաւերին, «Բաղրամեան» սրահին մէջ ստեղծելով մտերմիկ եւ տոհմիկ մթնոլորտ մը: Կրօնական ժողովի ու Ազգային Վարչութեան նախաձեռնութեամբ եւ Ազգ. Առաջնորդարանի Տիկնանց Օժանդակ Մարմինին կողմէ կազմակերպուած երեկոն բացառապէս հայկական էր թէ ոգեղէն եւ թէ նիւթեղէն իմաստով, տրուած ըլլալով օրուան ճաշացուցակն ու գեղարուեստական յայտագիրը:

Երեկոն սկիզբ առաւ ժամը 6:30ին, Առաջնորդ Սրբազանին ու հոգեւորականաց դասուն սրահ մուտքով: Մոմեր ի ձեռին, անոնք Ս. Ծննդեան յատուկ շարականներով ներկաներուն փոխանցեցին Քրիստոսի Ս. Ծննդեան անւտիսը: Ներկայ շուրջ 650 տօնախմբողներուն շարքին էին Հայաստանի գլխաւոր հիւպատոս Տիար Արմէն Լիլոյեան, Լիբանանի հիւպատոսի տեղակալ Տիար Ֆատի Հաժալի, Ազգ. Կեդրոնական Վարչութեան անդամ Տիար Խաժակ Տիգիճեան, Հ.Յ.Դ. Բիւրոյի անդամ Տոքթ. Վիգէն Յովսէփեան, Հ.Յ.Դ. Կեդրոնական Կոմիտէի ներկայացուցիչ Տիար Աւետիք Իզմիրլեան եւ անդամներ, Համազգայինի, ՀՕՄի, Հ.Մ.Ը.Մի եւ այլ միութեանց ու կազմակերպութեանց ներկայացուցիչներ, Թեմիս ժողովականութեան՝ Կրօնական ժողովի, Ազգ. Վարչութեան, ծխական շրջաններու հոգաբարձութեանց ու երեսփոխանական կազմերու անդամներ, Ազգ. Վարժարաններու հնամակալ Մարմինի անդամներ, բարերարներ ու բարեկամներ:

Շարականներու երգեցողութեան անարտին, Տ. Միւռն Ծ. Վրդ. Ազնիկեան ընթերցեց Ղուկասու Աւետարանի Ս. Ծննդեան դրուագը: Այնուհետեւ, հանդիսավարը՝ Տ. Հրանդ Քիւնյ. Երեցեան, ողջունեց ներկաները եւ զանոնք հրաւիրեց մասնակցելու թաթախի արարողութեան:

Ողջոյնի խօսքեր արտասանեցին Տ. Օ. Մարմինի անդամներէն Տիկին Ծովիկ Չէյթլեան եւ Ազգ. Վարչութեան ատենապետ Տոքթ. Կարօ Յակոբեան: Վերջինը ողջունեց ներկայութիւնը պաշտօնական հիւրերուն, նշելով, որ Ս. Ծննդեան տօնը հայութեան համար մեր եկեղեցւոյ նկատմամբ ուխտի վերանորոգման առիթ է: Ան հակիրճ կերպով անդրադարձաւ 2007 տարուան ընթացքին իրագործուած նուաճումներուն, ըլլայ Ազգ. Առաջնորդարանի յարկին տակ, ըլլայ Հայ Դատի հետապնդման ծիրին մէջ,

ու այս առիթով շնորհակալութիւն յայտնեց այս ու նմանօրինակ աշխատանքներուն զօրակցող բոլոր ազգայիններուն ու բարերարներուն:

Սպիտակ պաստառի վրայ ցուցադրուեցաւ Մեծի Տանն Կիլիկիոյ Ս. Աթոռի գահակալ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի պատգամը, ուղղուած՝ Առաջնորդ Սրբազանին, ժողովականութեան ու ներկաներուն: Վեհափառ Հայրապետը նախ եւ առաջ անդրադարձաւ Ս. Ծնունդի խորհուրդին, նշելով, որ Քրիստոսի աշխարհի առաքումը կը նպատակադրէր մարդը վերստին մօտեցնել իր արարիչին, նկատի ունենալով, որ ան հեռացած էր Աստուծմէ: Ս. Ծնունդով, մարդը վերագտաւ իր իսկական դիմագիծը՝ եղաւ Աստուծոյ որդի, իսկ Աստուածորդին բացաւ ճշմարիտ ու ճշմարտութեան ճանապարհը: Ան յորդորեց ունկնդիրները, որ մեր կեանքերը լեցունին Աստուծոյ պարգեւներով ու քրիստոնեական սկզբունքներով, քալել Բեթղեհեմ տանող ուղիէն ու մեր կեանքերուն մէջ շօշափելի կիրարկման վերածել սիրոյ, հաւատքի, ծառայութեան ու նուիրումի պատուիրանները:

### **ՀԻՐ ԴԻՄՆԱԳԵՏՆԵՐՈՒ ՄՐՏԻ ԽՕՍՔԵՐԸ**

Այնուհետեւ, յաջորդաբար խօսք առին Լիբանանի ու Հայաստանի դիւանագիտական ներկայացուցիչները:

Տիար Ֆատի Հաժալի, շնորհակալութեան արտայայտութիւններէ ետք, վեր առաւ հայ եւ լիբանանցի ժողովուրդներուն ճակատագիրներու նմանութիւնը, նշելով, որ Լիբանան երախտապարտ է նաեւ երկիրը ձգած իր հայ զաւակներուն ու Ազգ. Առաջնորդարանին, որոնք մշտապէս զօրավիգ են Լիբանանին: Ան այս առիթով շնորհաւորեց հայութեան Ս. Ծնունդն ու ամանորը:

Տիար Արմէն Լիլոյեան, իր կարգին շնորհաւորանքի խօսքերէ ետք, նշեց, որ այս տօնը հայութեան համար վերածնունդի եւ վերանորոգումի տօն է: Ան անդրադարձաւ ժամանակակից այնպիսի եղելոյթներու, որոնք մարդկութիւնը կը շեղեն այս տօնի պատգամներէն, սակայն անհրաժեշտ է գործել հաւատքով ու կարեկից ըլլալ ընչազուրկին ու մանուկներուն: Ան նաեւ կանգ առաւ այն իրողութեան վրայ, որ մեր եկեղեցին դարեր շարունակ մեր ժողովուրդին պաշտպանը եղած է, երբ զրկուած ենք սեփական պետութենէ, իսկ վերանկախացած Հայաստանի կտրած ճամբան ան համեմատեց նորածին մանուկի մը կեանքին, որ սկզբնական շրջանին կարօտ է ծնողական, այս պարագային՝ հայ ժողովուրդի խնամքին ու հոգածութեան, անոր պատանութեան տարիները կը դիմագրաւեն որոշ դժուարութիւններ, իսկ երբ վաղը դառնայ երիտասարդ ու ինքնավստահ, այդ փուլին յանձն պիտի առնէ իր պատասխանատուութիւնները, պիտի գործակցի դրացիներու հետ, պիտի շահի անոնց յարգանքը, եւ սակայն միշտ ալ կարօտ պիտի ըլլայ ծնողական խնամքի ու հոգածութեան: Ան շեշտեց հզօր ու ամուր Հայաստանի մը կերտման առաջադրանքը եւ իր խօսքը եզրափակեց վեր առնելով Ս. Ծննդեան խորհուրդէն բխող պատգամները, որոնք կը թելադրեն հոգիի փրկութիւն, որ կը կատարուի մարդկութեան ընտանիքի մէն մի անդամի փրկութեամբ, իբրեւ երաշխիք՝ բոլորի փրկութեան:

## ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐՔԱՉԱՆԻՆ ՊԱՏՎԱՄԸ

Երեկոյին եզրափակիչ խօսքը արտասանեց Առաջնորդ Սրբազանը ու այս առիթով ներկաներուն փոխանցեց իր պատգամը: Ան առաջին հերթին անդրադարձաւ այն իրողութեան, որ այս երեկոն սկիզբ առաւ Ս. Ծննդեան յատուկ շարականներով, որոնք բոլորս փոխադրեցին Աստուածորդուն աշխարհ առաքելութեան պատգամին մթնոլորտէն ներս: Ապա, ան կանգ առաւ նոյնիսկ Ս. Ծննդեան խորհրդաւոր դէպքին ու անկէ բխող անժամանցելի պատգամներուն վրայ: «Ս. Ծննդեան տօնը իւրայատուկ իմաստ ու խորհուրդ ունի մէն մի հայու համար, ո՛ր որ ալ գտնուի ան, Յայաստանի, Արցախի թէ արտերկրի տարբեր օճախներու մէջ: Ս. Ծնունդը հայուն համար վերածնունդի, քրիստոնեական ուխտի ու հաւատարմութեան յանձնառութեան վերանորոգման օր է, անիկա օրն է զգալու եւ վերապրելու իբրեւ Յայ Զրիստոնեայ, իւրայատկութիւն մը, որ հայը կը տարբերէ այլ ազգութիւններէ, առանց սակայն զայն առանձնացնելու աշխարհէն, քրիստոնեայ աշխարհէն, որուն առաջին անդամներէն եղած ենք 301 թուականէն ալ առաջ, Յայաստանի մէջ քրիստոնէութեան պետական կրօն հռչակումէն դարեր առաջ, երբ նոյնիսկ Զրիստոսի առաքելները Ս. Ծննդեան աւետիսը ու աստուածատուր պատգամները բերին Յայաստան, եւ որուն շնորհիւ, մեր եկեղեցին կը կոչուի Յայաստանեայց Առաքելական Սուրբ եկեղեցի», ըսաւ Առաջնորդ Սրբազանը, որ այս առիթով փառք ու երախտագիտութիւն արտայայտեց Աստուծոյ՝ մարդկութեան ու ներկաներուն շնորհուած բարիքներուն համար: Առաջնորդ սրբազանը յանուն ներկաներուն նաեւ շնորհակալութեան խօսք ուղղեց Վեհափառ Յայրապետին, որ իր պատգամով յորդորած էր ներկաները, միաժամանակ յիշեցնելով, որ Վեհափառ Յայրապետը 2008 տարին հռչակած է Զրիստոնեական Դաստիարակութեան Տարի, որ լիարժեքօրէն պիտի նշուի նաեւ մեր Թեմին մէջ, նոր մղում տալով այս անդաստանին մէջ տարուող աշխատանքներուն:

Առաջնորդ Սրբազանը ողջունեց ներկայութիւնը հայրենի ու Լիբանանի պետութեանց դիւանագիտական ներկայացուցիչներուն, կազմակերպութեանց ու միութեանց ներկայացուցիչներուն, ժողովականութեան անդամներուն, բարերարներուն ու բարեկամներուն, թեմիս կրթական համակարգի ներկայացուցիչներուն ու բոլոր ներկաներուն: «Այս սրահին մէջ դուք կազմած էք գեղեցիկ ու խորհրդանշական փունջ մը, որ հարազատ պատկերն է մեր Թեմին ու մեր ծառայական աշխատանքին, ծառայութիւն, որ կ'արժեւորուի ու կ'արդիւնաւորուի սերտ ու համերաշխ գործակցութեամբ: Այսօր, պահն է վերանորոգելու մեր երթի ուղին ու Ս. Ծննդեան պատգամէն ներշնչուած՝ զայն աւելի եւս հարստացնելու խաղաղութեան ու հաճութեան սերմերով, որպէսզի անոնց ծաղկումը բարիք բերէ մեր մեծ ընտանիքի իւրաքանչիւր անդամին, զայն մարմնաւորող ամբողջութեան», շեշտեց ան:

Իր խօսքին յաջորդ բաժինով, Առաջնորդ Սրբազանը հակիրճ կերպով անդրադարձաւ Ազգ. Առաջնորդարանի յարկին ու հովանիին տակ անցեալ տարուան ընթացքին արձանագրուած նուաճումներուն, որոնցմէ գլխաւորն էր Ազգ. Առաջնորդարանի նոր շէնքի ծրագիրին լրումը: Ան

շնորհակալութեան ու երախտապարտութեան խօսք ուղղեց Առաջնորդարանի բարերարներուն, միութեանց ու կազմակերպութեանց, մեր ազգայիններուն, որոնք սերտօրէն գործակցեցան մասնակից դառնալով այս իրագործումին: Առաջնորդ Սրբազանը յոյս յայտնեց, որ առանց պարտքի ամբողջացած շինարարական այս աշխատանքէն ետք, վստահաբար նոյն ոգիով ու ընթացքով կարելի պիտի ըլլայ մարել շէնքի գնման հանգրուանէն մնացած պարտքը: Ան գոհունակութեամբ արտայայտուեցաւ այն իրողութեան մասին, որ Ազգ. Առաջնորդարանը դարձած է միաժամանակ աղօթքի ու մշակոյթի կեդրոն, առիթը ունեցած է ընդունելու պաշտօնական հիւրերու եւ ազգի գաւակներու այցելութիւնները, մարմնաւորելով «Ազգի Տուն» ըլլալու հանգամանքը: Այս բոլորը վստահաբար ուրախութեամբ ու բերկրանքով կը դիտուին մեր բարերարներուն ու բարեկամներուն կողմէ, որովհետեւ այս իրագործումին մասնակից ու բաժնէկից են անոնք, աւելցուց Առաջնորդ Սրբազանը:

Խօսելով յառաջիկայի ծրագիրներու մասին, Առաջնորդ Սրբազանը առաջին հերթին անդրադարձաւ երիտասարդական միութեանց գործունեութեան աւելի եւս աշխուժացման, ապա նաեւ յայտարարեց, որ 2008 տարի պիտի ըլլայ յոբելէնական տարի: Արդարեւ, այս տարին 50րդ տարեդարձն է Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան կողմէ ամերիկեան այս ամերուն ծառայական աշխատանքներու սկսման, նաեւ 35րդ տարեդարձը՝ Արեւմտեան մեր Թեմին հաստատման: «Նման հանգրուաններ պիտի ունենան խթանող իմաստ ու մեր աշխատանքի դաշտերը ընդարձակելու պատգամ պիտի տան մեզի», շեշտեց Առաջնորդ Սրբազանը:

Վերջապէս, անդրադառնալով հոգեւոր ու կրթական կալուածներու մէջ աճող պահանջներուն ընդառաջելու յանձնառութեան, Առաջնորդ Սրբազանը նկատել տուաւ, որ «այս առաջադրանքները յաւելեալ քաղցր լուծեր պիտի ըլլան Ազգ. Առաջնորդարանիս յարկին ու հովանիին տակ գործող բոլոր նուիրեալներուն համար: Այս ազնիւ մարտահրաւերները պիտի դիմաւորենք վերանորոգ կամքով, յաւելեալ կորովով ու մեր լաւագոյնը տալու պատրաստակամութեամբ. նոր մարտահրաւերները պիտի դիմագրաւենք ինքնավստահութեամբ, անվախօրէն, ու մանաւանդ հաւատքով ու յանձնառութեան ոգիով, որովհետեւ գիտենք, տասնամեակներու փորձառութիւնը ցոյց տուած է, որ առանձին չենք մեր աշխատանքի դաշտերուն մէջ, մեր կողքին ունինք Ձեզ ու Ձեզի պէս բազմաթիւ նուիրեալներ, որոնք, իբրեւ բարերար, գործակից, լծակից ու անձանօթ զինուորներ՝ միշտ ալ պատրաստակամ եղած են ընդառաջելու գործակցութեան մեր հրաւերներուն, միշտ ալ արդարացուցած են մեր ակնկալութիւնները, որովհետեւ հաւասարապէս կը հաւատան ազգային այս հաստատութեան առաքելութեան, կը վստահին գործող անձերուն ու ժողովականութեան յանձնառութեան, անշահախնդրութեան ու մեր հաւաքական կեանքը բարելաւելու նախանձախնդրութեան: Գնահատանք ու շնորհակալութիւն բոլորին»:

Իր խօսքի վերջին բաժինով, Առաջնորդ Սրբազանը շնորհակալութեան յատուկ խօսք ուղղեց բարերարներուն ու հովանաւորներուն, մանաւանդ Տէր եւ Տիկին Րաֆֆի եւ Ճոան Մանուկեանի, Տիկին Թինա Գարուանի, Տոքթ. Արմէն Գասապեանի ու Օր. Աստղիկ

Քեօլեանի, Տեր եւ Տիկին Յովսէփ եւ Էլիզապէթ Պոյաճեաներու, Առաջնորդարանիս նորագոյն բարերարներէն Տեր եւ Տիկին Վաղարշակ եւ Նարինէ Գրիգորեաններու, նշելով, որ հովանաւորներուն ու բարերար նուիրատուներուն անուանացանկը հրատարակուած է սոյն երեկոյթի գրքոյկին մէջ: Վերջապէս, ան գնահատանքով ու դրուատիքով անդրադարձաւ այս երեկոյթի կազմակերպիչներուն ու գեղարուեստական յայտագիրին մասնակիցներուն մասին, բոլոր ներկաներուն մաղթելով յարատեւութիւն, արդիւնաբեր տարի եւ իղձերու իրականացում:

Նշենք, որ գեղարուեստական ճոխ յայտագիրին մասնակցութիւն բերին հետեւեալները. Յերմինէ Ամիրեան (Ս. Ծննդեան շարականներ, դաշնակի վրայ ընկերակցութեամբ Փրոֆ. Լեւոն Աբրահամեանի), Փրոֆ. Լեւոն Աբրահամեան ու պատանի երաժիշտ Արեգ Մելքոնեան (դաշնակ, վերջինը՝ Պապաջանեանէն ու Խաչատուրեանէն), Գագիկ Պատալեան (ժողովրդական երգեր) եւ Տ. Օ. Մարմինի անդամներէն Տիկին Սալբի Սրուրեան (ասմունք):

Տօնական երեկոն վերջ գտաւ ժամը 10ին, «Կիլիկիա» խմբերգով, հոգեւորականաց դասուն կողմէ Հայրապետական Մաղթանքի երգեցողութեամբբ ու Առաջնորդ Սրբազանին «Պահպանիչ»ով:

## **SOL ՄԵՌԵԼՈՑ**

Երկուշաբթի, 7 Յունուարը օրն էր մեզմէ առջաւետ բաժնուած հարազատներու յիշատակի ոգեկոչման:

Առաջնորդ Սրբազան Հօր գլխաւորութեամբ ու հոգեւոր հայրերու մասնակցութեամբ, Հոլիվուտ Հիլզի ու Կլենտէյլի գերեզմանատուներուն մէջ տեղի ունեցան հոգեհանգստեան յատուկ արարողութիւններ, ապա նաեւ գերեզմանօրհներ:

## **PRELATE'S CHRISTMAS DINNER AN UNPRECEDENTED SUCCESS**

On Sunday, January 6<sup>th</sup>, Armenians around the world celebrated the Birth and Theophany of our Lord Jesus Christ. The Western Prelacy celebration of this glorious feast commenced on January 5<sup>th</sup> and concluded on January 7<sup>th</sup>.

On the evening of Saturday, January 5<sup>th</sup>, Christmas Eve services took place in Prelacy churches with H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, celebrating Divine Liturgy and delivering the sermon at St. Sarkis Church in Pasadena. In attendance was California State Assembly Member Anthony Portantino.

On Sunday, January 6<sup>th</sup>, the Feast of the Nativity and Theophany of our Lord was celebrated in all churches with Divine Liturgy and the blessing of water. Archbishop Mardirossian conducted services at St. Mary's Church in Glendale. The Honorable Armen Liloyan, Consul General of the Republic of Armenia, was in attendance.

The celebrations continued in the evening with the Prelate's traditional New Year's and Christmas Dinner at Bagramian Hall in Montebello, with over 650 Prelacy friends in attendance. The dinner was organized by the Prelacy Ladies Auxiliary. The evening began with the entrance of the Prelate and clergy singing Christmas hymns with candles in hand. Among the guests in attendance were the Honorable Armen Liloyan, Consul General of Armenia, the Honorable Fadi Hajali, the acting Consul General of Lebanon, Central Executive Council member Mr. Khajag Dikijian, A.R.F. Bureau member Dr. Viken Hovsepian, A.R.F. Central Committee representative Mr. Avedik Izmirlian, members of the Religious and Executive Councils, Hamazkayin, A.R.S. Homenetmen, parish Boards of Trustees, delegates, Board of Regents, benefactors, sponsors, and friends.

Welcoming remarks were made by Master of Ceremonies Rev. Hrant Yeretsian, followed by remarks by Ladies Auxiliary member Mrs. Dzovig Zetlian and Executive Council Chair Dr. Garo Agopian. In his taped message to the Prelate, Prelacy councils' members, and guests, H.H. Aram I, Catholicos of the Great House of Cilicia, spoke of the true meaning of Christmas which is to bring man closer to God and urged the attendees to live their lives with love, faith, and devotion according to the principles of our Christian faith, and to follow the path of righteousness.

The Consuls of Armenia and Lebanon were then invited to offer their thoughts on this occasion. Acting Consul General Fadi Hajali after expressing thanks spoke of the similarities between the Armenian and Lebanese people and stated that Lebanon is grateful to have the support of the Armenian people and of the Prelacy. He concluded with wishes for a happy new year and a merry Christmas to all.

In his remarks, Consul General Armen Liloyan first expressed thanks as well then spoke of how Christmas is a time of rebirth and renewal for the Armenian people. He stressed how the church has been our guardian for centuries even in times when we did not have an independent republic, and concluded by emphasizing the importance of building a strong republic.

Closing remarks were delivered by the Prelate who conveyed his message to the guests. The Prelate began by speaking of the timeless messages of the Nativity saying "The Feast of the Nativity has special meaning for Armenians around the world, whether in Armenia, Artsakh, or the Diaspora. The Nativity is, for Armenians, a day of renewal and rebirth; renewal of our vows to remain loyal to our Christian faith and Armenian heritage, and spiritual rebirth as Armenian Christians." On this occasion, he asked the guest to join him in giving thanks and glory to God for His gifts and blessings to mankind. The Prelate also offered thanks to H.H. Aram I, Catholicos of the Great House of Cilicia, and reminded the faithful that His Holiness has declared the year

2008 to be the Year of Christian Education which we will commemorate in the coming year.

The Prelate then addressed the distinguished guests, council members, representatives of community organizations, sponsors, and friends, stating that all those present are members of the extended Prelacy family and it is due to the collaboration and close relationship between the members that we have enjoyed so many collective successes.

In the second part of his remarks the Prelate briefly outlined the activities of the previous year most notably the successful completion of the building project. He thanked all the sponsors who contributed to the realization of that dream and expressed hope that we will soon achieve the burning of the mortgage. In speaking of activities in the coming year, the Prelate emphasized the further revitalization of our youth groups and how the year 2008 is momentous one since we will be celebrating the 50<sup>th</sup> anniversary of the establishment of a Prelacy in North America and the 35<sup>th</sup> anniversary of the Western Prelacy.

The Prelate continued by noting that as we embark on new projects, "We will undoubtedly face new challenges on our way; however we are certain we can overcome any challenge with the continuous support of faithful friends, sponsors, and colleagues such as all of you here tonight. We commend you and thank you for your constant readiness to contribute to the successful realization of our mission."

In conclusion the Prelate expressed thanks to all the sponsors and donors, whose names were listed in the evening's program, and specifically to Mr. and Mrs. Raffy and Joanne Manoukian, Mrs. Tina Carolan, Dr. Armen Kassabian, Ms. Asdghig Keuylian. Mr. and Mrs. Hovsep and Elizabeth Boyajian, and Mr. and Mrs. Vagharshag and Narine Grigoryan and to all the patrons. The Prelate also thanked the Ladies Auxiliary for the organizing of the dinner as well as the participants of the artistic program which included Hermine Amirian (Christmas hymns accompanied by Prof. Levon Aprahamian on the piano), Prof. Levon Aprahamian and Arek Melkonian (piano), Gagik Badalian (popular songs) and Salpi Srourian (recitation).

The evening came to a close with the singing of "Giligia" and the Prelate's benediction.

On the morning of Monday, January 7<sup>th</sup>, requiem services took place at the Hollywood Hills and Glendale Forest Lawn conducted by the Prelate and clergy members.